Երաժշտության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից. I ունկնդրման մաս , II փակ և բաց առաջադրանքներ, որոնք ներկայացված են առանց ունկնդրման նյութերի:

Ունկնդրման մասի համար հատկացված է սահմանված ժամանակ: Թեստի էլեկտրոնային բուկլետում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան հրահանգում նշված է առաջադրանքը կատարելու համար հատկացված կոնկրետ ժամանակը:

Մնացած ժամանակը ըստ Ձեր հայեցողության բաժանեք թեստի II մասի առաջադրանքները կատարելու համար:

Թեստի առավելագույն միավորն է՝ 70:

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն :

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք կիրառել ստեղնաշարի կոճակները:

I մաս՝ ունկնդրում

Ունկնդրման մասն ընդգրկում է տասը առաջադրանք:

Առաջադրանքներ 1-6:

<u>Հրահանգ:</u> Լսեք երաժշտական հատվածները և պատասխանեք համապատասխան հարցերին: Առաջին վեց առաջադրանքում յուրաքանչյուրի համար հատկացված է մեկ երաժշտական հատված և երկու հարց: Յուրաքանչյուր հարցին կից տրվում է չորս ենթադրական պատասխան: Ընտրեք և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք մեկ ճիշտ պատասխան:

Յուրաքանչյուր երաժշտական հատված լսում եք երկու անգամ: Առաջին և երկրորդ ունկնդրումների միջև դադարը կազմում է 20 վայրկյան:

Նախքան յուրաքանչյուր առաջադրանքի համար հատկացված երաժշտական հատվածի ունկնդրումը տրվում է 10 վայրկյան՝ առաջադրանքի հարցերը կարդալու համար:

(Առաջադրանքները տրված են հաջորդ էջից:)

Առաջադրանք 1. (2 միավոր)

Նախքան առաջին երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (1.1 և 1.2).

1.1 Ո՞ր տարածաշրջանի երգ է:

ա) Քարթլիի

բ) Սվանեթիի

գ) Աջարիայի

դ) Սամեգրելոյի

1.2 Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է:

ա) Ծիսական

բ) Աշխատանքային

գ) Խնջույքի

դ) Լաշքրուլի (մարտական)

Առաջադրանք 2. (2 միավոր)

Նախքան երկրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (2.1 և 2.2).

2.1 Ո՞վ է երաժշտության հեղինակը:

ա) Գոգի Ցաբաձեն

բ) Ռնազ Լաղիձեն

գ) Բիձինա Կվերնաձեն

դ) Սուլխան Ցինցաձեն

2.2 Ո՞ր կինոնկարից է երգը:

ա) «Հանդիպում լեռներում»

բ) «Աբեզարա» («Չարաճճին»)

գ) «Երբ ծաղկեց նշենին»

դ) «Արտասովոր ցուցահանդեսը»

Առաջադրանք 3. (2 միավոր)

Նախքան երրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (3.1 և 3.2).

3.1 Ո՞վ է երաժշտության հեղինակը:

ա) Ֆերենց Լիստը

բ) Ռոբերտ Շումանը

գ) Կարլ Վեբերը

դ) Ֆրեդերիկ Շոպենը

3.2 Ո՞ր պարն է ընկած ստեղծագործության հիմքում:

ա) Մազուրկա

բ) Վալս

գ) Խաբաներա

դ) Տարանտելա

Առաջադրանք 4. (2 միավոր)

Նախքան չորրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (4.1 և 4.2).

4.1 Ո՞ր կերպարի դերերգն է հնչում:

ա) Աիդայի

բ) Ջիլդայի

գ) Վիոլետտայի

դ) Աննայի

4.2 Ո՞ր ժանրի մենահամար է:

ա) Ռոմանս

բ) Արիոզո

գ) Արիա

դ) Բալլադ

Առաջադրանք 5. (2 միավոր)

Նախքան հինգերորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (5.1 և 5.2).

5.1 Ո՞ր դարաշրջանի ստեղծագործություն է:

ա) Վերածննդի

բ) XIX դարի

գ) Բարոկկոյի

դ) XX դարի

5.2 Ո՞վ է երաժշտության հեղինակը:

ա) Ադոլֆ Ադանը

բ) Սերգեյ Պրոկոֆևը

գ) Պյոտր Չայկովսկին

դ) Լյուդվիգ Մինկուսը

Առաջադրանք 6. (2 միավոր)

Նախքան վեցերորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (6.1 և 6.2).

6.1 Ո՞վ է երաժշտության հեղինակը:

ա) Սուլխան Ցինցաձեն

բ) Գիա Կանչելին

գ) Նոդար Գաբունիան

դ) Բիձինա Կվերնաձեն

6.2 Ո՞ր երաժշտական գործիքն է մենակատարում:

ա) Կլառնետը

բ) Թավջութակը

գ) Վալդհոռնը

դ) Ալտը

Առաջադրանք 7. (1 միավոր)

<u>Հրահանգ:</u> Ունկնդրեք երաժշտական հատվածները, նոտային գրառման մեջ տրված չորս տարբերակից ընտրեք ունկնդրած լադի համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք ճիշտ պատասխանը:

Լադը լսեք երկու անգամ:

Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան՝ նոտային գրառումը վերանայելու համար:



Առաջադրանք 8. (1 միավոր)

<u>Հրանանգ:</u> Լսեք երաժշտական հատվածը, նոտային գրառման մեջ տրված չորս տարբերակից ընտրեք ունկնդրած ռիթմիկ ֆիգուրացիայի համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք ճիշտ պատասխանը:
Ռիթմիկ ֆիգուրացիան լսեք երկու անգամ:
Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան՝ նոտային գրառումը վերանայելու համար:



Առաջադրանք 9. (5 միավոր)

Երաժշտական թելադրություն:

Հրահանգ: Ունկնդրեք մեղեդին և գրառեք նոտային համակարգի վրա: Միղեդին միաձայնային է, ութ տակտանոց և տրված է մեկ տոնայնության մեջ: Այն լսելու և գրելու համար տրվում է 15 րոպե: Մեղեդին լսում եք ձայնագրությամբ չորս անգամ, յուրաքանչյուր հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե:

Թելադրությունը տրված է Դո մաժոր (C dur) տոնայնության մեջ:

Ձեր կողմից գրառված մեղեդին տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա տրված նոտային համակարգի վրա:

Առաջադրանք 10. (13 միավոր)

Երաժշտական ստեղծագործության վերլուծություն

<u>Հրահանգ:</u> Լսեք երաժշտական ստեղծագործությունը և վերլուծեք ըստ տրված հարցերի, ձայնագրության և նոտագրության հիման վրա:

Երաժշտական ստեղծագործությունը լսում եք երեք անգամ, յուրաքանչյուր հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե: Նախքան ունկնդրելը տրվում է 30 վայրկյան՝ առաջադրանքի հարցերը վերանայելու համար:

(Հարցերը տրված են հաջորդ երկու էջի վրա)

1. Ո՞ր վոկալային ժանրին է պատկանում տրված ստեղծագործությունը: Հիմնավորեք ձեր կարծիքը (2 միավոր):

2. Որոշեք.

ա) ստեղծագործության երաժշտական ձևը (1 միավոր),

բ) ստեղծագործության տոնայնությունը (1 միավոր),

գ) ստեղծագործության վերջում, սկսած 75-րդ տակտից տրված կադանսի մեջ մտնող ակորդների հարմոնիկ (ներդաշնակ) ֆունկցիաները (1 միավոր):

3. Բնութագրեք, թե ինչպես է զարգանում ստեղծագործության գեղարվեստա-հուզական կողմը, վերլուծեք և հակիրճ նկարագրեք, թե երաժշտական արտահայտչականության ո՞ր միջոցները, ինչպիսի՞ մեղեդի, ռիթմ, տեմպ, տեմբր (հնչերանգ), հարմոնիա (ներդաշնակություն), լադատոնայնություն, ֆակտուրա և այլն, հատկապես կարևոր են այս ստեղծագործության գեղարվեստական բովանդակություն ստեղծելու համար (3 միավոր):

4. Երաժշտական բնութագրիչների հիման վրա, որոշեք ստեղծագործության ստեղծման դարաշրջանը և կոմպոզիտորի ինքնությունը (2 միավոր):

5. Քննարկեք ստեղծագործության պատմամշակութային համատեքստը: Հակիրճ բնութագրեք կոմպոզիտորի ստեղծագործությունները և նշեք նրա երաժշտական ժառանգության մեջ այն ժանրի նշանակությունը, որին պատկանում է ունկնդրած ստեղծագործությունը (3 միավոր):

(Երաժշտական երկի նոտային գրառումը տրված է հաջորդ էջերում)

Etwas lebhaft.

Pianoforte

dim.

p

pp

5

In ei - nem Bäch-lein hel - le, da schoß in fro - her -

p


10
Eil die lau - ni - sche Fo - rel - le vor - ü - ber - wie ein Pfeil. Ich
15
stand an dem - Ge - sta - de und sah in sü - ßer - Ruh des


19
mun - tern Fisch-leins Ba - de im kla - ren Bäch-lein zu, des
23
mun - tern Fisch-leins - Ba - de im kla - ren Bäch-lein zu.


27
Ein
p
pp
31
fi - scher mit der Ru - te wohl an dem U - fer - stand, und
p


35
sah's mit kal - tem Blu - te, wie sich das - Fisch-lein wand. So
39
lang' dem Was - ser - Hel - le, so dacht ich, nicht-ge - bricht, so


43
fängt er die Fo - rel - le mit sei - ner An - gel nicht, so
47
fängt - er die - Fo - rel - le mit sei - ner An - gel nicht.


51
Doch
p
pp
55
end - lich ward dem Die - be die Zeit zu
cresc.


58
lang.
Er macht das Bäch - lein tük - kish
p
cresc.
61
trü - be, und eh ich es ge-dacht, so zuck - te sei - ne
p


65
Ru - te, das Fisch - lein, das Fisch - lein zap - pelt dran, und
p
69
ich mit re - gem Blu - te sah die Be - trog - ne an, und


73
ich mit re - gem - Blu - te sah die Be-tro-gne an.
77
dim.
pp

II մաս

Առաջադրանքներ 11-28. (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր)

<u>Հրահանգ:</u> Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրված պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա հետևյալ կերպ. պատասխանների համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի ուրիշ նշում՝ հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծում և այլն, չի ընկալվում էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկի վրա նշված պատասխանը, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը, որից հետո նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Հնարավոր չէ երկրորդ անգամ ընտրել այն պատասխանը, որն ուղղել եք:

Առաջադրանք 11.

Վարիացիոն ձևը կառուցված է՝

ա) Հիմնական երաժշտական թեմայի (ռեֆրենի) կրկնության և այլ թեմաների (էպիզոդների) հետ հերթագայության վրա

բ) Մեկ կամ երկու երաժշտական թեմայի փոփոխված կրկնության վրա

գ) Մի քանի երաժշտական թեմայի էքսպոզիցիայի, մշակման և ռեպրիզի վրա

դ) Երաժշտական ձևի առաջին և երրորդ մասում միևնույն (կամ մի փոքր փոփոխված), իսկ երկրորդ մասում՝ նոր երաժշտական նյութի վրա

Առաջադրանք 12.

Ստորև թվարկած խմբերից ո՞րն է *սխալ:*

ա) Տղամարդու երգչաձայներ են՝ կոնտր տենորը, տենորը, բարիտոնը, բասը

բ) Փայտե փողային երաժշտական գործիքների խմբին են պատկանում՝ ֆլեյտան, կլառնետը, հոբոյը, ֆագոտը

գ) Երաժշտաթատերական ժանրեր են՝ օպերան, օպերետը, մյուզիքլը, օրատորիան

դ) Կլասիցիզմի դարաշրջանի կոմպոզիտորներ են՝ Գլյուկը, Հայդնը, Մոցարտը, Բեթհովենը

Առաջադրանք 13.

Թվարկածներից ո՞րը *բնորոշ չէ* միջնադարի երաժշտական մշակույթին:

ա) Մոնոդիան

բ) Գրիգորյան խորալը

գ) Գվիդո դ'Արեցցոյի նոտագրությունը

դ) Օպերայի ժանրը

Առաջադրանք 14.

Ո՞ր ուղղության ընթացքում/դարաշրջանում է ստեղծվել կոնչերտո գրոսսո (իտալ. *concerto grosso*) ժանրը:

ա) Բարոկկո

բ) Ռոմանտիզմ

գ) Էքսպրեսիոնիզմ

դ) Վերածնունդ

Առաջադրանք 15.

Էկտոր Բեռլիոզի «Ֆանտաստիկ սիմֆոնիան» համարվում է՝

ա) Երկմաս ռոմանտիկ սիմֆոնիա

բ) Դասական քառամաս սիմֆոնիկ ցիկլ

գ) Ծրագրային սիմֆոնիկ ցիկլ լեյտմոտիվով

դ) Սիմֆոնիա մենակատարներով և երգչախմբով

Առաջադրանք 16.

Ո՞ր քաղաքում էր ապրում Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտը կյանքի վերջին տասնամյակում:

ա) Փարիզում

բ) Զալցբուրգում

գ) Վիեննայում

դ) Պրահայում

Առաջադրանք 17.

Նվագախմբի բոլոր գործիքների կողմից երաժշտական երկի հատվածի միաժամանակյա կատարումը կոչվում է՝

ա) Sforzando

բ) Tutti

գ) Rubato

դ) Arpeggio

Առաջադրանք 18.

Ո՞ր կոմպոզիտորն է ավանդ ներդրել էլեկտրոնային երաժշտության զարգացման գործում:

ա) Յաննիս Քսենակիսը

բ) Սերգեյ Պրոկոֆևը

գ) Կառլ Օրֆը

դ) Առնոլդ Շոնբերգը

Առաջադրանք 19.

Ո՞ր կոմպոզիտորն է առաջին անգամ ներմուծել վրաց պրոֆեսիոնալ երաժշտության մեջ փշավական լադը:

ա) Սուլխան Նասիձեն

բ) Օթար Թաքթաքիշվիլին

գ) Շալվա Մշվելիձեն

դ) Անդրիա Բալանչիվաձեն

Առաջադրանք 20.

Ո՞րն է մեսսայի հատվածների ճիշտ հաջորդականությունը:

ա) Kyrie, Sanctus, Benedictus, Agnus Dei, Credo, Gloria

բ) Gloria, Agnus Dei, Sanctus, Benedictus, Credo, Kyrie

գ) Credo, Sanctus, Benedictus, Kyrie, Agnus Dei, Gloria

դ) Kyrie, Gloria, Credo, Sanctus, Benedictus, Agnus Dei

Առաջադրանք 21.

Թվարկածներից, ո՞ր բալետի երաժշտության մեջ է առաջին անգամ հնչել չելեստայի պարտիան:

ա) «Պետրուշկա»

բ) «Ժիզել»

գ) «Մարդուկ-Զարդուկ»

դ) «Ռոմեո և Ջուլիետ»

Առաջադրանք 22.

Ինչպե՞ս է կոչվում հումորային և/կամ գրոտեսկ-ֆանտաստիկ բնույթի գործիքային պիեսը:

ա) Նոկտյուրն

բ) Պաստորալ

գ) Բալլադ

դ) Սկերցո

Առաջադրանք 23.

Ցիկլը, որտեղ օգտագործված է կանկանի մեղեդին Ժակ Օֆենբախի օպերետից, հանդիսանում է՝

ա) Մոդեստ Մուսորգսկիի «Պատկերներ ցուցահանդեսից»

բ) Քամիլ Սեն-Սանսի «Կենդանիների շքահանդեսը»

գ) Կլոդ Դեբյուսիի «Մանկական անկյունը»

դ) Պյոտր Չայկովսկիի «Տարվա եղանակները»

Առաջադրանք 24.

Ո՞ր օպերայի հատվածն է «Տորեադորի երգը (քայլերգ)»:

ա) «Լոհենգրին»

բ) «Կարմեն»

գ) «Աիդա»

դ) «Ֆիգայոյի ամուսնություն»

Առաջադրանք 25.

Թվարկածներից ո՞րը *չի համարվում* պոլիֆոնիկ ձև:

ա) Կանոնը

բ) Ֆուգան

գ) Ինվենցիան

դ) Պրելյուդը

Առաջադրանք 26.

Լարային-աղեղնավոր երաժշտական գործիքի վրա, լարը մատով կսմթելու կատարման միջոց է.

ա) Legato

բ) Glissando

գ) Pizzicato

դ) Arco

Առաջադրանք 27.

Ո՞ր իտալերեն տերմինն է արտահայտում տեմպի արագացում երաժշտական ստեղծագործության մեջ:

ա) Accelerando

բ) Diminuendo

գ) Portamento

դ) Agitato

Առաջադրանք 28.

Ինչպե՞ս է կոչվում պարը, որը որոշ դասական սիմֆոնիաների մասերից մեկն է:

ա) Սարաբանդա

բ) Մենուետ

գ) Ալեմանդա

դ) Պոլոնեզ

Առաջադրանքներ 29 - 32. (Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր)

Կառուցում նոտայից

<u>Հրահանգ:</u> Կառուցեք *լա* նոտայից տրված ինտերվալը, եռահնչյուն և քառահնչյուն ակորդները, լադը և գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված նոտաների համակարգի վրա:

29. Մաքուր կվինտա,

30. Մինոր կվարտսեքստակորդ,

31. Փոքր մաժոր սեպտակորդ,

32. Հարմոնիկ մինոր:

Առաջադրանքներ 33-35.

Համապատասխանության որոշում

Հրահանգ: Առաջադրանքում տրված է թվարկացանկի երկու սյունակ: Որոշեք համապատասխանությունը դրանց տրվածության միջև: Ձախ սյունակի յուրաքանչյուր տվյալին (1, 2, 3) համապատասխանում է աջ սյունակի միայն մեկ տվյալ (ա, ծ, գ, զ, ը): Յուրաքանչյուր համապատասխանությունը պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում նշեք X նշանով:

Առաջադրանք 33. (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր)

Որոշեք համապատասխանությունը ֆրանսիացի գրողների և այն կոմպոզիտորների միջև, որոնց օպերաների գրական սկզբնաղբյուրն է դարձել թվարկած գրողների ստեղծագործությունները:

1. Ալեքսանդր Դյումա որդի
2. Պիեռ Բոմարշե
3. Պրոսպեր Մերիմե

ա) Ջակոմո Պուչինի

ծ) Ժորժ Բիզե

գ) Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ

զ) Ջուզեպպե Վերդի

ը) Քրիստոֆ Գլյուկ

Առաջադրանք 34. (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր)

Որոշեք համապատասխանությունը օպերաների և դրանց երաժշտության հեղինակների միջև.

1. «Մինդիա»
2. «Քեթո և Կոտե»
3. «Լելա»

ա) Ռևազ Լաղիձե

ծ) Զաքարիա Փալիաշվիլի

գ) Դիմիտրի Արաղիշվիլի

զ) Օթար Թաքթաքիշվիլի

ը) Վիկտոր Դոլիձե

Առաջադրանք 35. (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր)

Որոշեք համապատասխանությունը դաշնամուրային ստեղծագործությունների և ժանրերի միջև.

1. «Դիմակահանդես»	ա) Սյուիտ
2. «Հեղափոխական»	բ) Կոնցերտ
3. «Պաթետիկ»	գ) Էտյուդ
	դ) Սոնատ
	ե) Ռապսոդիա

Առաջադրանքներ 36-40. (Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր)

«Ճշմարիտ է-Սխալ է»

<u>Հրահանգ:</u> Որոշեք տրված դրույթը ճշմարիտ է թե սխալ, եթե համարում եք, որ դրույթը ճշմարիտ է, ապա նշեք X նշանը համապատասխան վանդակում, նման դեպքում մեկնաբանություն անել չի պահանջվում, իսկ եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա համապատասխան վանդակում դրեք X նշանը և հատկացված տեղում գրեք ճիշտ բացատրությունը:

Սխալ դրույթի դեպքում, տրված բացատրությանը համապատասխանեցրեք ճիշտ տերմին/բառ կամ տրված տերմինի/բառի համար գրեք ճիշտ բացատրություն:

<u>Հաշվի առեք,</u> որ չի ընդունվի այն պատասխանը, ուր տրված բացատրության դրական ձևը կփոխվի բացասականի կամ ընդհակառակը:

Առաջադրանք 36.

Մոդուլացումը երաժշտության մեջ նշանակում է տեմպի փոփոխություն:

Առաջադրանք 37.

Սեկվենցիան երաժշտական կոմպոզիցիայի միջոց է, որի ժամանակ երաժշտական դարձվածքը (ֆրազ) կրկնվում է տարբեր բարձրության հնչյուններից:

Առաջադրանք 38.

Սվանական ժողովրդական երգերին բնորոշ է բուրդոնական բասը:

Առաջադրանք 39.

Օպերային ռեչիտատիվը վոկալ ձև է, երաժշտական ասմունք, որն արտահայտում է խոսքի ինտոնացիա և ռիթմ:

Առաջադրանք 40.

Յոհան Սեբաստիան Բախի գործիքային ստեղծագործություններից մեկն է «Երաժշտություն ջրի վրա» նվագախմբային սյուիտը:

Առաջադրանքներ 41-42. (Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր):

Ժամանակագրության որոշում

<u>Հրահանգ:</u> Ժամանակագրական առումով՝ հնագույնից դեպի նորագույնը դասավորեք թվարկացանկը: Պատասխանների աղյուսակում ժամանակագրական հաջորդականությունը նշված է թվանշաններով՝ 1-ից մինչև 4-ը: Պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում, ընտրված թվանշանի երկայնքով, գրեք ճիշտ պատասխանները այբուբենի համապատասխան տառերով (ա, ծ, գ, զ):

Առաջադրանք 41.

Ժամանակագրական առումով դասավորեք սիմֆոնիաները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի.

ա) «Անավարտ սիմֆոնիա»

բ) «Լիտավրների տրեմոլով»

գ) «Հերոսական»

դ) «Նոր աշխարհից»

Առաջադրանք 42.

Ժամանակագրական առումով դասավորեք կոմպոզիտորների թվարկացանկը, նրանց կյանքի և գործունեության ժամանակաշրջանի համաձայն.

ա) Ջորջ Գերշվին

բ) Ֆելիքս Մենդելսոն

գ) Անտոնիո Վիվալդի

դ) Յոզեֆ Հայդն